273 Տկարացած, հոգնած եմ,

1. Տկարացած, հոգնած եմ,
Իմ սուրբ Հա՛յր, օգնի՛ր,
Ջահել սիրտս խոցված է,
Իմ սուրբ Հա՛յր, օգնի՛ր:

Օգնի՛ր, օգնի՛ր,
Սուրբ Հայր, օգնի՛ր,
Խավարից լույս հանիր:

2. Վկան ես իմ ցավերի,
Իմ սուրբ Հա՛յր, օգնի՛ր,
Հալածանքի, տանջանքի,
Իմ սուրբ Հա՛յր, օգնի՛ր:

3. Թշնամուցս ազատի՛ր,
Իմ սուրբ Հա՛յր, օգնի՛ր,
Մեղքերիցս ազատի՛ր,
Իմ սուրբ Հա՛յր, օգնի՛ր:

4. Օգնի՛ր ինձ՝հաղթող լինեմ,
Իմ սուրբ Հա՛յր, օգնի՛ր,
Թշնամուց ես չպարտվեմ,
Իմ սուրբ Հա՛յր, օգնի՛ր:

5. Տե՛ր, ինձ Քեզ նմանեցրո՛ւ,
Իմ սուրբ Հա՛յր, օգնի՛ր,
Հոգիս Քեզ մոտ վերցրո՛ւ,
Իմ սուրբ Հա՛յր, օգնի՛ր: